

45. Եւթողջ քնատները, թէ՛ նրա
46. Ազգականները, բոլորը մէկէն,
47. Ջնջեն և վերցնեն,

Այս արձանագրութեան մէջ յիշուած երկիրը — Կուտուրլի — իմ կարծիքով պէտք է լինի Մասիսի սարոտում լեռնային Խոսրոս-ը — գիւղը և Իլդարունի գետը պէտք է լինի «Լ» ջուր: Ամառուայ վերայարձիս պէտք է քննեմ այդ գիւղը և նրա շրջակաները:

10/25 Մարտ 1901,

Կ. Յ. Բասմաշեան

Պարիս.



Խ Ա Ղ Ա Ղ Ա Ի Թ Ե Ա Ն Դ Ա Շ Ն Ա Գ Ի Բ

ՀԻՒՍԻՍԱՓԱՅԱԼ մեծ պետութեան
Լայնածաւալ աշխարհէն
Ձայն մի հնչեց աւետաւոր,
Ձայն ուժգին էր և զօրաւոր.
Հրաւէր կարգաց ողջ պետութեանց,
Գալ ի համբոյր հաշտութեան,
Խաղաղութիւն տալ աշխարհին:
Լսեց եւրոպայ ծափահարեց,
Հաւանեցան ողջ պետութիւնք.
Ասեն՝ բաւ է ընդունայն ջանք
Առ ի կազմել ահեղ բանակ
Անհնարին զինուորութեան,
Միշտ մրցելով ընդ միմեանն,
Մի քան զմի առաւելու,
Ապառել երկրին բարգաւաճանք,
Ի զուր վատենել քերտն ու վաստակ
Աշխատաւորին ժողովուրդին:

Քանի՜ դառն է և դժնդակ
Ազգի որդիք, սերունդ կայտառ,
Ծաղկահասակ երիտասարդ,
Վարել տանել ի դաշտ արեան,
Ո՛հ, կոտորել տալ անխնայ,
Առնել յետոյ այն ցուրտ կառակ՝

«Ողջ են մայրեր, թող նոր ծնին»
Ասեն և այս բան անհեթեթ
Թէ՛ ստեղծող Բրուտին անիւ
Դառնայ շրջի միշտ անդադար,
Եւ դրգանէն արագապէս
Հանէ անօթն մարդկեղէն:
Եթէ փշրին հազար, հազար,
Անդրէն տեղին դան բիւր հազար,
Մեզ ինչ փոյլթ է կեանքի հաշիւ,
Ստեղծագործող Տէր թող հոգայ:

Այս լսում է արդար Աստուած,
Ում թողեալ է որքն ու աղքատ
Եւ մայրերու լացն աղաղակ
Ու դառնագին հեծեծանք
Չհասնեն միթէ երկնուց ատեան:
Տէր դատաւոր չառնէ անտես,
Արեան դաշտի մեծ դատաստան:
Որ իշխան է մահու, կենաց,
Ո՛չ պահանջէ ի մէնջ համար,
Առ ի ձեռաց արիւնսպարաւ
Թէ Աբէլի ափ մի արիւն
Մինչև երկինքն էր բողբոջում.
Քանի՜ ապա մեր բիւրաւոր
Չինուորական եղբարց արիւն,
Որ ծովանայ հեղեղ լինի,
Չհանէ յերկինս ուժգին բողբոջ:
Հէրիք այսչափ սուր ի ձեռին,
Ի կռիւ ի կռիւ ճակատամարտ.
Պարտասեցար ո՛հ ուժաթափ,
Խաղաղութիւն, խաղաղութիւն:

Օ՛հ, ամփոփեմք սուրն ի պոտեան,
Չէնք և զինուորք ի բաց դիպեն,
Դահեղ զիրար ողջունելով,
Խաղաղութեան դաշն կընքեմք:
Յիսուս ասէ՛ չ՛կարէ աշխարհ
Խաղաղութիւն տալ աշխարհին:
Մեք քրիստոնէայ թագակիր եմք,
Խաչի նշան է մեր դրօշակ,
Աւետարան է մեր հաւատ,
Եթէ լինիմք սերտ միաբան,
Ընդէր չ՛կարեմք մեք միութեամբ
Խաղաղութիւն տալ աշխարհին:
Օ՛հ, փորձ առցուք մեք միանգամ,
Խորհրդական իշխանք երկրի
Ժողովեցան ի միասին,
Բացին ատեան և մեծ դիւան,

Շուրջ նստեցան տտենակալը:
 Մի բան պակաս ունէր տտենան.
 Աւետարան չէր ի միջի,
 Այլ սոսկ միայն գրիչն ու գիւան,
 Քաղաքադէտ խելք մարդկան:
 Մինչ խորհէին և երկնէին,
 Ծնանել անբակ մի դաշնագիր,
 Որ թէ անցնեն երկինք երկիր,
 Չանցանեն բանք մեր դաշնագրին:
 Եւ ինչպէս:
 Ինչպէս պողպատ ամուր զօրեղ,
 Թող թէ շղթայ մի շինել,
 Կապել ողին աշխարհակալ,
 Առիւծ փակել յիւր գառադեղն.
 Թող մոնչէ որչափ կամի:
 Սահման դնել, արձան կանգնել,
 Ջնջել յերկրէ դայն հին առածն,
 «Սահմանք քաջաց զէնք իւրեանց»:
 Թէ ալէկոծ ծովերուն պէս,
 Հանցեն ալիք լեռնանման,
 Անդրէն յինքեանս խորտակեսցին:
 Սահմանագիր ձեռք Արարչին
 Դոյզն աւաղով փակեր է ծով,
 Որ կատաղի ալեաց հոսանք
 Չեցեն երբէք ընդ ափն ի դուրս:
 Այս է միակ օրէնք անխախտ,
 Խաղաղութիւն մեր աշխարհին:
 Այլ մինչ գրէին և երկնէին,
 Ծնանել ողջամբ զգաշնագիրն,
 Յանկարծ հնչեց շեփորն ահեղ,
 Հրաւէր ի կռիւ ճակատամարտ . . .
 Վրդովեցան Ատենակալք
 Առ ի խուճաղ և ի տագնաոյ,
 Կործանեցան գիւտի և կահք
 Եւ փակեցաւ մեծ տտենան:
 Վերցաւ հրեշտակ խաղաղութեան,
 Իշաւ Արէս ի կռուոյ դաշտ:
 Ատենակալք բան փոխեցին,
 Ի սուր ի սուր գոչեցին,
 Թողէք, տսեն, խորհրդարան,
 Ճակատագիր է պատերազմ,
 Եւ ո՞վ կարէ ի ճակատէն քերել դայն:
 Օհն ճեղկեսցուք ի դաշտ արեան,
 Եւ ուր արդեօք.
 Ի թրանսլալ և Չինաստան:
 Առէք ընդ մեզ զգաշնագիրն,

Անդ կնքեսցուք մարդոց արեամբ.
 Սուրն է պայման խաղաղութեան,
 Բան և խորհուրդ չառնեն ոչինչ:
 Փող հնչելով յաղթանակաւ
 Պարգեմք դրօշակ նոր հաշտութեան:
 Զ'կարեմք եղծել այն հին առածն.
 «Սահմանք քաջաց զէնք իւրեանց»,
 Որ տկարն է մնացէ ի նոյն,
 Զօրաւորին լիցի սարուկ.
 Ուսցի կրել իշխողին լուծ:
 Մեր աշխարհին բնական օրէնք
 Այսպէս է միշտ, չ'կարէ չրջիլ:
 Զի ծովերու կէտք մեծամեծ
 Կըլցեն ձկունրս փոքրիւնս,
 Որոց փորն է խոր և անտակ,
 Զաշխարհ լնուն չ'ասնն տտակ:
 Չունի օգուտ մեր դաշնագիր,
 Ուժաւորին է այս աշխարհ
 Առանց կռուի, առանց արեան
 Խաղաղութիւն չունի աշխարհ:
 Ո՞ր, որ բնակեալք ես ի բարձունս,
 Տեսեր այսի զխորհուրդ մարդկան,
 Ծիծաղեցա՞ր ըզ'նորք:
 Ո՞վ Խնամակալ ազգի մարդկան,
 Աստուած հզօր իշխան և հայր,
 Յղեցեր Որդիդ քս մեր աշխարհ,
 Որ մեզ տուաւ սուրբ գաշնագիր,
 Խաղաղութեան Աւետարան:
 Ո՞վ դու Փրկիչ խաղաղարար,
 Ծնչեան քո չունչ կենդանարար.
 Աշխարհի չունչ կռիւ է և մահ,
 Եկար տեսար դու մեր աշխարհ,
 Ինքնին քններ զսիրտ մարդկան,
 Մարդիկ խեղ են և խօլամիտ,
 Դեռ ևս չուսան Աւետարանդ:
 Տուր մեզ զքոյդ խաղաղութիւն,
 Զոր չկարէ տալ մեզ աշխարհ:

